CALIFORNIA High-Speed Rail Authority

Հանրային ծանուցում

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ / ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՐԱԳԸՆԹԱՑ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատված

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ/
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթգծի Ղեկավար Մարմինը (Ղեկավար Մարմին) հայտարարել է *Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Շրջակա Միջավայրի Ազդեցության Հաշվետվության/Շրջակա Միջավայրի Ազդեցության Հայտարարության (Environmental Impact Report/Environmental Impact Statement* (EIR/EIS)) փաստաթղթի նախագծի հասանելիության մասին: EIR/EIS Փաստաթղթի նախագիծը պատրաստվել և հրապարակվել է Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի Որակի մասին Օրենքի (California Environmental Quality Act (CEQA)) և Շրջակա Միջավայրի Ազգային Քաղաքականության մասին Օրենքի (National Environmental Policy Act (NEPA)) պահանջների համաձայն:

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի EIR/EIS Փաստաթղթի նախագիծը և առնչվող փաստաթղթերը հասանելի կլինեն հանրությանը 2022թ-ի սեպտեմբերի 2-ից:

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի EIR/EIS Փաստաթղթի նախագիծը հասանելի է առցանց PDF ֆորմատով Ղեկավար Մարմնի կայքում (www.hsr.ca.gov)
կամ Դուք կարող եք էլեկտրանային օրինակի հարցում անել զանգահարելով՝ (800) 630-1039:

Շրջակա միջավայրի վերաբերյալ դիտարկումները, խորհրդակցությունները և այլ գործողությունները, որոնք պահանջվում են Շրջակա Միջավայրի մասին կիրառելի Դաշնային Օրենքներով այս ծրագրի համար, իրականացվել են Կալիֆորնիա նահանգի կողմից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Օրենսգրքի 23 Հոդվածի 327 գլխի (23 U.S.C. section 327) և 2019թ. հուլիսի 23-ի Փոխըմբռնման Հուշագրի (Memorandum of Understanding) համաձայն:

Հաշմանդամություն կամ մասնակցելու համար աջակցության կարիք ունեցող անձանց համար հասանելի են հարմարություններ: Թարգմանչական ծառայությունների կամ հատուկ կարիքների համար խնդրում ենք զանգահարել՝ (866) 300-3044 հեռախոսահամարով:

Այդ Փոխըմբռնման Հուշագրի շրջանակում, Ղեկավար Մարմինն է հանդիսանում ծրագրի գլխավոր գործակալությունը NEPA-ի ներքո: Ղեկավար Մարմինը նաև գլխավոր գործակալություն է հանդիսանում CEQA-ի ներքո:

ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐ

Նահանգային Ծրագրի (Փուլ 1) EIR/EIS փաստաթուղթը ավարտավծ էր 2005թ-ի նոյեմբերին, որպես շրջակա միջավայրի փուլային վերանայման գործընթացի առաջին փուլ Կալիֆորնիայի Արգընթաց Երկաթուղու (HSR) համակարգի համար, որը ծրագրված է ապահովելու անվտանգ արագընթաց էլեկտրական սնուցմամբ երկաթուղային համակարգ, որը միմյանց է կապակցում նահանգի գլխավոր քաղաքային շրջանները և որը ապահովում է կանխատեսելի և հետևողական երթևուկության ժամանակացույց: Հետագա նպատակն է՝ հաղորդակցական կապի ապահովումը կոմերցիոն օդանավակայանների, հանրային տրանսպորտի և մայրուղիների ցանցի հետ, և ներկայիս տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների վերացումը, քանի որ Կալինֆորնիայում մեծանում է միջքաղաքային ճամփորդությունների պահանջարկը, և այդ ամենը պետք է իրականացվի Կալիֆորնիայի եզակի բնական ռեսուրսների նկատմամբ զգայունության պահպանմամբ և պաշտպանությամբ:

Ղեկավար Մարմինը նախապատրաստել է ըստ ծրագրի մակարդակի (Փուլ 2) EIR/EIS Փաստաթղթի նախագիծը, որտեղ ներկայացված է Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ուսումնասիրությունը: Մոտավորապես 31-38 մղոն երկարությամբ ծրագրի այս հատվածը HSR ծառայություն կտրամադրի Փալմդեյլ Կայարանի (Palmdale Station) և Բըրբանք Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) միջև: EIR/EIS Փաստաթղթի նախագիծը տրամադրում է տեղեկատվություն ինչպես Փալմդեյլ Կայարանի (Palmdale Station) այնպես էլ Բըրբանք Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) վերաբերյալ՝ 3-րդ Գլխի տարբեր հատվածներում. Ազդեցության ենթարկված Շրջակա Միջավայր (Affected Environment), Շրջակա Միջավայրի Հետևանքներ (Environmental Consequences), և Մեղմացնող Միջոցառումներ (Mitigation Measures): Այդ երկու կայարանները հաստատված են Ղեկավար Մարմնի Տնօրենների Խորհրդի կողմից որպես այլ ծրագրի հատվածների մաս: Փալմդեյլ Կայարանը (Palmdale Station) հաստատվել է Ղեկավար Մարմնի Տնօրենների Խորհրդի կողմից որպես Bakersfield-ից Palmdale Ծրագրի Հատվածի մաս 2021թ-ի օգոստոսին, մինչդեռ Բըրբանք Օդանավակայանի Կայարանը (Burbank Airport Station) հաստատվել է որպես Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածի մաս 2022թ-ի հունվարին: Այս նախնական հաստատումների լույսի ներքո, մեկնաբանողներին խրախուսվում է իրենց մեկնաբանությունները կենտրոնացնել Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Կենտրոնական ենթահատվածի վրա, ինչպես ցույց է տրված Նկար 1-ում:

EIR/EIS Փաստաթղթի նախագծում գնահատվում է «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի և վեց Կառուցման Այլընտրանքների ազդեցությունները և առավելությունները (Նկար 1), որոնք միացնում են երկու հաստատված կայարանները: Ղեկավար Մարմնի Նախընտրած Այլընտրանքային տարբերակը NEPA-ի ներքո, որը ծառայում է որպես առաջարկված ծրագիր CEQA-ի շրջանակում, հանդիսանում է SR14A Կառուցման Այլընտրանքը: Նախընտրած Այլընտրանքային տարբերակի ուղին ընթանում է Palmdale քաղաքից հարավ-արևմուտք Անջելեսի Ազգային Անտառով (Angeles National Forest), այդ թվում Սուրբ Գաբրիել Լեռների Ազգային Հուշարձանով (San Gabriel Mountains National Monument), և այնուհետև շարունակվում է դեպի San Fernando Valley, որտեղ այն միանում է հաստատված HSR կայարանին Բըրբանքի Հոլիվուդ Օդանավակայանում (Hollywood Burbank Airport):

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախքան մեղմացուցիչ միջոցառումների իրականացումը Palmdale-ից Burbank Կառուցման Այլընտրանքների արդյունքում ակնկալվում են զգալի ազդեցություններ շրջակա միջավայրի վրա հետևյալ ոլորտներում. տրանսպորտ (շինարարության ազդեցություններ), օդի որակ և կլիմայի գլոբալ փոփոխություններ (շինարարության ազդեցություններ), աղմուկ և թրթռումներ (շինարարության և շահագործման ազդեցություններ), էլեկտրամագնիսական դաշտեր և էլեկտրամագնիսական միջամտություն (շինարարության և շահագործման ազդեցություններ), հանրային կոմունալ ծառայություններ և էներգիա (շինարարություն), կենսաբանական և ջրային ռեսուրսներ (շինարարության և շահագործման ազդեցություններ), հիդրոլագիա և ջրային ռեսուրսներ (շինարարության ազդեցություններ), երկրաբանություն, հող, սեյսմիկություն և հնեաբանական ռեսուրսներ (շինարարության ազդեցություններ), վտանգավոր նյութեր և թափոններ (շինարարության և շահագործման ազդեցություններ), ապահովություն և անվտանգություն (շահագործման ազդեցություններ), սոցիոտնտեսություն և համայնքներ (շինարարության և շահագործման ազդեցություններ), կայարանների պլանավորում, հողի օգտագործում, և զարգացում (շինարարության ազդեցություններ), գյուղատնտեսական հողեր (շինարարության ազդեցություններ, զբոսայգիներ, հանգստյան գոտիներ, և բացօթյա տարածքներ (շինարարության ազդեցություններ, էսթետիկա և արտաքին տեսքի որակ (շինարարության ազդեցություններ), և մշակութային ռեսուրսներ (շինարարության ազդեցություններ):

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՎԱՅՐԵՐ

Կա վտանգավոր թափոնների երեք բնորոշված տեղամաս, թվարկված Կալիֆորնիայի Կառավարության Օրենսգրքի 65962.5 Հոդվածի շրջանակում (Կոռտեզի ցանկ) (Section 65962.5 of the California Government Code (Cortese List)), որոնք գտնվում են ծրագրի տարածքի անմիջական հարևանությամբ: Այդ

տեղամասերն են Crane Company (3000 Winona Avenue, Burbank, 91504), Holochem, Inc. (13546 Desmond Street, Pacoima, 91331), և Lubrication Company of America (12500 Lang Station Road, Santa Clarita, 91351):

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ

Ղեկավար Մարմինը EIR/EIS Փաստաթղթի նախագիծը հասանելի է դարձրել հանրության վերանայմանը և մեկնաբանությունների ներկայացմանը առնվազն 45-օրյա ժամանակահատվածում CEQA և NEPA պահանջների համաձայն: Մեկնաբանությունների ներկայացման ժամանակահատվածի ընթացքում, գրավոր մեկնաբանությունները կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով՝

- Փոստով՝ «Palmdale-ից Burbank EIR/EIS Փաստաթղթի նախագծի Մեկնաբանություններ» վերնագրով, California High-Speed Rail Authority, 355 S. Grand Avenue, Suite 2050 Los Angeles, CA 90071 հասցեով
- Ղեկավար Մարմնի կայքէջի միջոցով (www.hsr.ca.gov),
- Էլ. փոստով՝ Palmdale_Burbank@hsr.ca.gov հասցեին, «Palmdale-ից Burbank EIR/EIS Փաստաթղթի նախագծի Մեկնաբանություններ» վերնագրով,
- Բանավոր մեկնաբանություններ (800) 630-1039 ուղիղ հեռախոսագծով՝ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար, և
- Բանավոր վկայություն հանրային լսումների ժամանակ, որը կկայանա 2022թ-ի մայիսի 10-ին 3:00-ից 8:00-ը p.m:

Մեկնաբանությունների ներկայացման ժամանակահատվածը մեկնարկում է 2022թ-ի սեպտեմբերի 2-ին և ավարտվում է 2022թ-ի նոյեմբերի 1-ին: Մեկնաբանությունները պետք է ուղարկվեն էլեկտրոնային եղանակով կամ փոստային կնիքով մինչև 2022թ-ի նոյեմբերի 1-ը, 5:00 p.m. PDT ժամանակով:

Հանրային վերանայման ժամանակահատվածից հետո, Ղեկավար Մարմինը կպատրաստի Վերջնական EIR/EIS փաստաթուղթը, որը կընդգրկի մեկնաբանությունների ներկայացման ժամանակահատվածում ստացված մեկնաբանությունների պատասխանները: Ղեկավար Մարմինը կարող է ըստ իր հայեցողության թողարկել մեկ փաստաթուղթ, որը բաղկացած կլինի Շրջակա Միջավայրի Ազդեցության Վերջնական Հայտարարությունից (Final Environmental Impact Statement) և Որոշման Արձանագրությունից (Record of Decision)՝ ԱՄՆ Օրենսգրքի 49 հոդվածի, 304a(b) և 23 հոդվածի 139(n)(2) կետերի (49 U.S.C. 304a(b) and 23 U.S.C. 139(n)(2)) համաձայն: Միասնական Շրջակա Միջավայրի Ազդեցության Վերջնական Հայտարարության/Որոշման Արձանագրության փաստաթղթի թողարկման վերաբերյալ որոշում կայացնելիս՝ Ղեկավը Մարմինը հաշվի կառնի, թե արդյոք նման միասնական փաստաթղթի թողարկմանը խոչընդոտում են կանոնադրական չափանիշները թե կիրառելիության նկատառումները:

ԲԱՑ ԴՌՆԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

Ղեկավար Մարմինը հրավիրում է Ձեզ մասնակցելու առցանց Բաց Դռների հանդիպմանը և առցանց Հանրային Լսումներին, որոնք ներկայացված են ստորև, որպեսզի կարողանաք ավելի շատ տեղեկատվություն ձեռք բերել EIR/EIS Փաստաթղթի նախագծի և վեց Կառուցման Այլընտրանքների վերաբերյալ: Առցանց Հանրային Լսումները կներառեն կարճ Բաց Դռների հանդիպման հատված և ներկայացում EIR/EIS Փաստաթղթի նախագծի մեկնաբանությունների գործընթացի վերաբերյալ, այնուհետև առցանց Հանրային Լսումներ, որի ընթացքում հանրության անդամները կարող են պաշտոնապես ներկայացնել իրենց բանավոր մեկնաբանությունները EIR/EIS Փաստաթղթի նախագծի վերաբերյալ: Ելնելով COVID-19 համաճարակի հետևանքով հանրային առողջության և անվտանգության մտահոգություններից՝ հանրային Բաց Դռների հանդիպումը և Հանրային Լսումները կանցկացվեն առցանց և հեռախոսի միջոցով:

Իսպաներեն լեզվի թարգմանիչները ներկա կլինեն հանդիպումներին: Այլ լեզուների վերաբերյալ հայտերը, ինչպես նաև անհրաժեշտ հարմարությունների վերաբերյալ հայտերը պետք է ներկայացվեն նշանակված հանդիպման օրվանից 72 ժամ առաջ: Խնդրում ենք զանգահարել (800) 630-1039 հեռախոսահամարով կամ Կալիֆորնիայի Հեռավար Ծառայության 711 հեռախոսահամարով՝ հարցման համաձայն նշանակված թարգմանիչներին: Դատարանի արձանագրողը, որը վարժ տիրապետում է իսպաներեն լեզվին, ներկա կլինի Հանրային Լսումներին, որպեսզի արձանագրի անգլերեն և իսպաներեն լեզուներով ստացված մեկնաբանությունները:

Ստորև ներկայացված է առցանց Բաց Դռների հանդիպումների և Հանրային Լսումների անցկացման ժամանակացույցը՝

Առցանց Բաց Դռների Հանդիպում

2022թ-ի հոկտեմբերի 6-ին, ժամը՝ 5:00 – 7:30 p.m.

Առցանց Հանրային Բաց Դռների Հանդիպում
Առցանց և Հեռախոսի միջոցով

Հինգշաբթի, 2022թ-ի հոկտեմբերի 6 -ին
Անգլերեն լեզվով ներկայացում ժամը՝ 5:00-6:30 p.m.
Իսպաներեն լեզվով ներկայացում ժամը՝ 6:30-7:30 p.m.

Առցացն Հանրային Լսումներ

2022թ-ի հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 3:00 – 8:00 p.m.

Առցանց Հանրային Լսում
Առցանց և Հեռախոսի միջոցով
Երեքշաբթի, 2022թ-ի հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 3:00-8:00 p.m.

Հաշմանդամություն կամ մասնակցելու համար աջակցության կարիք ունեցող անձանց համար հասանելի են հարմարություններ: Թարգմանչական ծառայությունների կամ հատուկ կարիքների համար խնդրում ենք զանգահարել՝ (866) 300-3044 հեռախոսահամարով:

Խնդրում ենք հղում անել Ղեկավար Մարմնի կայքին (www.hsr.ca.gov) լրացուցիչ տեղեկատվության, այդ թվում նշանակված Բաց Դռների հանդիպումների և Հանրային Լսումների, ինչպես նաև այդ հանդիպումներին մուտք գործելու վերաբերյալ թարմացված տեղեկատվություն ստանալու համար:

EIR/EIS ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Խնդրում ենք այցելել Ղեկավար Մարմնի կայքը (www.hsr.ca.gov), որտեղ Դուք կարող եք դիտարկել և ներբեռնել EIR/EIS Փաստաթղթի նախագծի Հատոր 1, 2, և 3-ը, ինչպես նաև ծրագրի այլ փաստաթղթերը: Դուք կարող եք նաև խնդրել EIR/EIS Փաստաթղթի նախագծի էլեկտրոնային տարբերակը՝ զանգահարելով (800) 630-1039 հեռախոսահամարով: Տեխնիկական զեկույցների էլեկտրոնային օրինակները նույնպես հասանելի են ըստ պահանջի՝ զանգահարելով Ղեկավար Մարմնի գրասենյակ՝ (800) 630-1039 հեռախոսահամարով:

EIR/EIS Փաստաթղթի նախագծի էլեկտրոնային կամ տպված օրինակները հասանելի կլինեն տվյալների պահպանման հետևյալ բազաներում, նշված հաստատությունների աշխատանքային ժամերին: Հաստատությունների աշխատանքային օրերը/ժամերը կարող են կրճատվել COVID-19-ի իրավիճակով պայմանավորված հանրային առողջության և անվտանգության կարգավորումներով:

Տվյալենրի Պահպանման Բազաներ	
Լոս Անջելես Վարչաշրջանի Գրադարան, Acton/Agua Dulce Գրադարան	33792 Crown Valley Road, Acton, CA 93510
Լոս Անջելես Վարչաշրջանի Գրադարան, San Fernando Գրադարան	217 North Maclay Avenue, San Fernando, CA 91340
Լոս Անջելեսի Հանրային Գրադարան, Lake View Terrace Branch Գրադարան	12002 Osborne Street, Lake View Terrace, CA 91342
Լոս Անջելեսի Հանրային Գրադարան, Pacoima Branch Գրադարան	13605 Van Nuys Boulevard, Pacoima, CA 91331
Լոս Անջելեսի Հանրային Գրադարան, Sun Valley Branch Գրադարան	7935 Vineland Avenue, Sun Valley, CA 91352
Լոս Անջելեսի Հանրային Գրադարան, Sylmar Branch Գրադարան	14561 Polk Street, Sylmar, CA 91342
Լոս Անջելեսի Հանրային Գրադարան, Sunland-Tujunga Branch Գրադարան	7771 Foothill Boulevard, Tujunga, CA 91042
Palmdale City Գրադարան	700 East Palmdale Boulevard, Palmdale, CA 93550
Santa Clarita Public Գրադարան, Canyon Country Jo Anne Darcy Գրադարան	18601 Soledad Canyon Road, Santa Clarita, CA 91351
Burbank Public Գրադարան, Northwest Branch Գրադարան	3323 West Victory Boulevard, Burbank, CA 91505

EIR/EIS Փաստաթղթի նախագծի էլեկտրոնային կամ տպված օրինակները և Փուլ 1-ի փաստաթղթերը նաև հասանելի են դիտարկման համար Ղեկավար Մարմնի գլխամասում աշխատանքային ժամերին՝ 770 L Street, Suite 620 MS-1, Sacramento, CA հասցեով, ինչպես նաև նշանակված հանդիպումով Գլխավոր Մարմնի Հարավային Կալիֆորնիայի Շրջանային գրասենյակում՝ 355 S. Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA հասցեով: Հարավային Կալիֆորնիայի Շրջանային գրասենյակում փաստաթղթերի վերանայման նպատակով հանդիպում նշանակելու համար խնդրում ենք զանգահարել 800-630-1039 հեռախոսահամարով:

Bakersfield-ից Palmdale Ծրագրի Հատվածի Վերջնական EIR/EIS (2021) փաստաթուղթը և Burbank-ից Los Angeles Վերջնական EIR/EIS (2022) փաստաթուղթը կարելի է վերանայել Ղեկավար Մարմնի կայքում www.hsr.ca.gov, ինչպես նաև դրանք հասանելի են Ղեկավար Մարմնի գրասենյակներում, վերը նշված հասցեներով: Ղեկավար Մարմնի գրասենյակների աշխատանքային ժամերը կարող են կրճատվել, COVID-19-ի իրավիճակով պայմանավորված հանրային առողջության և անվտանգության կարգավորումներով: Խնդրում ենք այցելել www.hsr.ca.gov կայքը արդի տեղեկատվությանը տիրապետելու համար:

Ղեկավար Մարմինը խտրականություն չի սահմանում հաշմադամության հիման վրա, և ըստ պահանջի կտրամադրի համապատասխան հարմարություններ՝ իր ծրագրերին, ծառայություններին և գործնեությանը հավասար հասանելիություն ապահովելու համար:

If you need help translating or interpreting this letter, Arabic, Armenian, and Spanish speaking staff are available to help you. Call (800) 630-1039 if you wish to request this service.

إذا كنت بحاجة إلى ترجمة هذا الكتاب تحريرياً أو شفوياً، فثمة موظفون يتحدثون اللغة العربية متاحين لمساعدتك. يرُجى الاتصال على الرقم

(800) 630-1039.

Եթե այս նամակի թարգմանության կարիքը ունեք, ապա արաբերեն, հայերեն և իսպաներեն լեզուներին տիրապետող անձնակազամը պատրաստ է օգնելու Ձեզ: Խնդրում ենք զանգահարել (800) 630-1039 հեռախոսահամարով, եթե ցանկանում եք օգտվել այդ ծառայությունից:

Si necesita ayuda traduciendo o interpretando esta carta, hay personal disponible que habla español para ayudarle. Llame al (800) 630-1039 si desea solicitar este servicio.



Նկար 1 Palmdale-ից Burbank Նախագծի Հատված

Հաշմանդամություն կամ մասնակցելու համար աջակցության կարիք ունեցող անձանց համար հասանելի են հարմարություններ: Թարգմանչական ծառայությունների կամ հատուկ կարիքների համար խնդրում ենք զանգահարել՝ (866) 300-3044 հեռախոսահամարով: